

անտի. եւ առ տարաւ զնա մեկուսի ի ճանապարհէն: 11 Եւ առնն խոնարհիլ հրամայէր եւ ասէր. Չերիցութեան ձեռն դնեմ ի վերայ քո: 12 Իսկ նա տայր պատասխանի զանձնէն, եթէ այր աւագակ սպանող չարագործ եւ խառնագ-
նաց լեալ ի մանկութենէ իմմէ, ես ոչ ինչ եմ արժանի այդպիսի իրաց, եւ այժմ դեռ ի նմին գործ կամ: 13 Եւ շատ ի վեգ եկեալ յամառէր այրն, եւ նա եւս չար քան զնա: 14 Ապա բռնաբար զգետնեալ զայրն, դնէր Յոհան զձեռն իւր՝ առ-
նել զնա երեց. եւ յարուցեալ հրամայէր լուծանել զհանգոյցս մեկնոցին, եւ ար-
կանել նմա աղաբողոն: 15 Եւ ասէր. Երթ ի գեղ քո, եւ լիջիր դու անդ երեց գեղջն՝ ուստի ես: 16 Եւ անգամ ոչ գիտէր զայրն թէ յորմէ՛ գեղջէ իցէ: 17 Ինքն Յոհան մատուցեալ բուռն հարկաներ զձիոյն, եւ ասէր. Այս ինձ կաւչիկք լի-
ցին, փոխանակ զի երեց արարի զքեզ: 18 Իսկ այրն յամառեալ ի վերայ ձիոյն չառնոյր յանձն տալ. ապա բռնաբար յինքն հանեալ զձին, եւ զայրն արձա-
կեաց: 19 Եւ այս ամենայն իրքս վասն ձիոյն եղէն:

20 Ապա այրն թէ ոչ կամաւք՝ աղէբողոն արկեալ, զնայր ի տուն իւր, եւ երթեալ մտանէր ի մեջ ընդանեաց իւրոց: 21 Ասէ ցկին իւր եւ ցընդանիս. Ա-
րիք յաղաւթս կամք: 22 Եւ նոքա ասէն. Մոլիս դու, դե՞՞ ուրեմն հարաւ ի քեզ: 23 Իսկ նա ասէ. Արիք կամք յաղաւթս, վասն զի երեց եմ: 24 Իսկ նոքա զար-
մացեալ, մերթ շիկնէին, մերթ ծիծաղէին, մինչեւ բազում անգամ յամառեալք,
ապա ուրեմն հաւանեցան կալ յաղաւթս ընդ նմա: 25 Ապա ասէ կինն ցայրն իւր. Ո՛չ դու երախայ էիր, եւ չէիր մկրտեալ: 26 Ասէ այրն ցկինն իւր. Ապշեցոյց,
չէտ յիշել, եւ ոչ ես յիշեցի զայդ ասել ցնա. զիս երեց արար, եւ զձին սանձաւ
թամբաւ առ եւ անց: 27 Եւ ասէն ցայրն ընդանիքն իւր. Յարիցես անդրէն
զնասցես առ եպիսկոպոսն, եւ ասասցես. Մկրտեալ չէի, զի՞ արարեր զիս ե-
րեց: 28 Իսկ նորա յարուցեալ զնացեալ առ եպիսկոպոսն, ասէ ցնա. Ես
մկրտեալ չէի, զի՞ արարեր զիս երեց: 30 Եւ ասէ Յոհան. Սափորով միով ջուր
բերէք: 31 Եւ առեալ զջուրն Էարկ զգլխով նորա, եւ ասէ. Երթ, մկրտեցի զքեզ:
Եւ արձակէր զայրն վաղվաղակի յիւրմէ:

ԳԼՈՒԽ Թ.

1 Յաղագս նորին Յովհաննու:

2 Երբեմն տյն Յոհան անցանէր առ այգեաւք ուրումն. եւ էր ժամանակն
զայգիսն յատելոյ: 3 Աղաղակէր առ նա այր մի յայգւոյն, եւ ասէ. Արհնեա,
տէր եպիսկոպոս, զմեզ եւ զայգիսս: 4 Ասէ Յոհան. Փուշ եւ տատասկ բուսցի:
5 Ասէ այրն. Ի մարմինդ քո բուսցի փուշ եւ տատասկ, փոխանակ զի տարա-
պարտուց անիծանես զմեզ: 6 Եւ եղէն նշանք յԱստուծոյ. զի իբրեւ չոգաւ Ե-
պիսկոպոսն ի վանս իւր, հասին հարուածք ի վերայ նորա, սկսաւ ընդ ամե-
նայն անդամս մարմնոյ նորա որպէս զփուշ հարկանել: 7 Եւ մեծապէս շտա-
պեալ անկեալ ի տանջանս չարաչարս հարուածոց, եւ ի մեծ տագնապի